Համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Էստոնիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Էստոնիայի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

- կարևոր նշանակություն տալով հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության զարգացմանն ու քաղաքացիների իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանության ապահովմանը,
- ղեկավարվելով Անկախ պետությունների ներքին գործերի մարմինների միջև համագործակցության և փոխադարձ վստահության ամրապնդման և զարգացման ցանկությամբ,
- ընդգծելով, որ հանցավորության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության հիմքում ընկած են պետությունների ինքնիշխանության և հավասարության. փոխըմբռնման և փոխշահավետության սկզբունքները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրենց պետություններում գործող օրենսդրության հիման վրա, համագործակցությունն իրականացնում են հետևյալ բնագավառներում՝

ա) անձի կյանքի, առողջության, ազատության, արժանապատվության և սեփականության նկատմամբ հանցագործությունների դեմ պայքարի,

բ) բանդիտիզմի, ահաբեկչության և միջազգային հանցագործությունների դեմ պայքարի,

գ) զենքի ու զինամթերքի, պայթուցիկ, թունավոր ու ռադիոակտիվ նյութերի հետ կապված անօրինական գործառնությունների դեմ պայքարի,

դ) թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի,

ե) կեղծ դրամանիշերի, արժեթղթերի և փաստաթղթերի պատրաստման և իրացման դեմ պայքարի,

զ) տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի,

է) մաքսանենգության, ինչպես նաև այն հանցագործությունների դեմ պայքարի, որոնց առարկան համարվում են մշակութային և պատմական արժեքները,

ը) հանցագործների, քննությունից և դատից, պատիժը կրելուց թաքնվողների, անհայտ կորած, ինչպես նաև ալիմենտ վճարելուց և ըստ հայցերի դատարանների որոշումները կատարելուց խուսափող անձանց հետախուզման,

թ) չճանաչված դիակների, անհայտ հիվանդների և երեխաների ինքնության պարզման,

ժ) ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային, օդային և խողովակաշարային տրանսպորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի:

Կողմերը նաև համագործակցում են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման, հրդեհների վերացման, տարերային աղետների, վթարների, համաճարակների, անասնահամաճարակների հետևանքների վերացման բնագավառներում:

Հոդված 2

Կողմերը, ղեկավարվելով ազգային օրենսդրությամբ, հանցավորության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնում են հետևյալ ձևերով՝

ա) քրեական գործերով, օպերատիվ հաշվառման գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերով հարցումների և խնդրանքների կատարմամբ,

բ) նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների և դրանց հետ առնչվող անձանց վերաբերյալ օպերատիվ-հետախուզական, օպերատիվ-տեղեկատու և քրեագիտական, ինչպես նաև արխիվային տեղեկատվության փոխանակմամբ,

գ) օպերատիվ հետախուզական միջոցառումների և դատավարական գործողությունների անցկացմանն օժանդակելով,

դ) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող օրենսդրական և նորմատիվ ակտերի, ուսումնական գրականության և աշխատանքային փորձի փոխանակմամբ, ինչպես նաև կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործում փոխադարձաբար աջակցություն ցույց տալով,

ե) ավտոմոբիլային, քրեագիտական և հատուկ տեխնիկայի, կապի միջոցների, գույքային ունեցվածքի և արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի փոխշահավետ մատակարարմամբ,

զ) հատուկ և այլ բեռների տարանցիկ փոխադրումների իրականացմանը, դատապարտյալների փոխադրմանը և ուղեկցմանն աջակցելով,

է) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակմամբ, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արդիական հիմնախնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների, մշակումների և ծրագրերի համատեղ անցկացմամբ,

ը) ծածկագրային կապի կազմակերպմամբ,

թ) մշակութային և մարզական կապերի զարգացմամբ, աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների սանատորա-առողջարանային բուժման կազմակերպման օժանդակությամբ:

Սույն Համաձայնագիրը Կողմերին չի արգելում մշակելու ու զարգացնելու համագործակցության փոխընդունելի այլ ձևեր:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի առաջին մասում նախատեսված հարցումներն և խնդրանքները պետք է համապատասխան կերպով ձևակերպվեն և ունենան հետևյալ ռեկվիզիտները՝

ա) ներքին գործերի հարցում անող կամ խնդրատու մարմնի և ներքին գործերի այն մարմնի անվանումը, ում դիմում են,

բ) հարցմանը կամ հանձնարարությանը վերաբերող գործի կամ նյութի անվանումը,

գ) վկաների, տուժածների, կասկածյալների, մեղադրյալների, հետախուզվողների, ամբաստանյալների կամ դատապարտյալների ազգանունները և անունները, նրանց քաղաքացիությունը, զբաղմունքը, մշտական բնակության կամ գտնվելու վայրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցիչների ազգանունները, անունները և հասցեները,

դ) հարցման կամ հանձնարարության բովանդակությունը, ինչպես նաև դրանց էությանը և իրավախախտման հանցակազմի նկարագրությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ:

Հարցմանը կամ հանձնարարության կցվում են նաև պատշաճ կերպով ձևակերպված հատուկ որոշումներ, որոնք անհրաժեշտ են թույլատրված գործողություններ կատարելու համար:

Հարցումները կամ հանձնարարությունները պետք է հաստատված լինեն ներքին գործերի մարմնի զինանշան պատկերող կնիքով և ղեկավարի ստորագրությամբ: Հարցումների և հանձնարարությունների իրականացման ժամանակ Կողմերն օգտվում են ռուսերեն լեզվից:

Հարցումն ուղարկող Կողմի հարցումներին ու հանձնարարություններին կցված պետական լեզվով կազմված փաստաթղթերին միացվում է դրանց պատշաճ հաստատված ռուսերեն թարգմանությունը:

Հարցումը կամ հանձնարարությունը կատարելիս կատարող Կողմի պետական լեզվով կազմված փաստաթղթերը թարգմանվում են ռուսերեն լեզվով:

Թարգմանությունները վավերացվում են իրավասու հաստատության կնիքով և պաշտոնատար անձի ստորագրությամբ:

Անհետաձգելի դեպքերում կարող են արվել բանավոր հարցումներ, սակայն դրանք անհապաղ պետք է հաստատվեն գրավոր, այդ թվում՝ տեքստի հաղորդման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հոդված 4

Հարցումների կամ հանձնարարությունների բավարարումը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժվել, եթե հարցում անող Կողմը գտնի, որ դրա կատարումը առաջ կբերի մարդու իրավունքների, իր պետության ինքնիշխանության, անվտանգության և այլ կարևոր շահերի խախտումներ: Նման որոշում կայացնելու դեպքում հարցում անող Կողմը գրավոր տեղեկացվում է՝ նշելով մերժման պատճառները:

Հոդված 5

Կողմերից յուրաքանչյուրը ապահովում է մյուս Կողմից տրամադրվող տեղեկությունների գաղտնիությունը, եթե այդ տեղեկությունները կրում են գաղտնի բնույթ, կամ եթե հաղորդող Կողմը դրանց բովանդակության հրապարակումը համարում է անցանկալի: Տեղեկությունների փակ լինելու աստիճանը որոշում է հաղորդող Կողմը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից որևէ մեկի ստացած տվյալները և տեղեկությունները, ինչպես նաև տեխնիկական սարքավորումները երրորդ Կողմին կարող են փոխանցվել բացառապես դրանք տրամադրող Կողմի համապատասխան մարմնի կամ կառուցվածքային ստորաբաժանման համաձայնությունը ստանալուց հետո միայն:

Հոդված 6

Կողմերը, ղեկավարվելով ազգային օրենսդրությամբ, մյուս Կողմի հարցման և հանձնարարության դեպքում պարտավորվում են աջակցել միմյանց՝

ա) հետաքննությունից, դատից և պատիժը կրելուց խուսափողներին ձերբակալելու և, անհրաժեշտության դեպքում, կալանավորելու հարցերում,

բ) քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրանց նկատմամբ կայացված դատավճիռն ի կատար ածելու համար անձանց համապատասխան Կողմին հանձնելու հարցերում:

Հոդված 7

Կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, իրենց աշխատակիցներին կարող են գործուղել մյուս Կողմի ներքին գործերի մարմիններ, որտեղ նրանց ցույց է տրվում անհրաժեշտ օգնություն՝ ստացած հանձնարարությունը կատարելու համար, միջոցներ է ձեռք առնվում նրանց իրավական պաշտպանվածությունն ապահովելու ուղղությամբ:

Հոդված 8

Կողմերը պայմանավորվեցին անհատական կարգով և հաշվի առնելով ազգային օրենսդրությունը, քննարկել ՆԳ մարմիններում մյուս Կողմի աշխատակիցներին ծառայության ընդունելու հարցերը, լուծել նրանց ծառայողական ստաժի պահպանման հարցերը՝ երկարամյա ծառայության համար տոկոսային հավելավճար տալու և պետական կենսաթոշակ նշանակելու համար, այն չափերով, որ սահմանված է ընդունող Կողմի ներքին գործերի մարմինների աշխատակիցների համար:

Կողմերը նաև պայմանավորվել են ներքին գործերի մարմինների հրամանատարական ու շարքային կազմի անձանց և Կողմերի պետությունների տարածքում մշտապես բնակվող նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակի ապահովման հարցերը սահմանված կարգով իրագործել իրենց մոտ գործող օրենսդրության հիման վրա:

Հոդված 9

Համագործակցություն իրականացնելիս Կողմերն օգտվում են ռուսերեն լեզվից:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

Հոդված 11

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերը, եթե այլ կարգ չի սահմանվի:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև վեց ամիս լրանալը՝ սկսած այն օրից, երբ Կողմերից մեկը կստանա դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմի գրավոր ծանուցումը:

Ի հաստատումն դրա՝ պատվիրակությունների ղեկավարները, ընդունված կարգի համաձայն, որի համար լիազորված են իրենց կառավարությունների կողմից, 1992 թվականի ապրիլի 24-ին Ալմա-Աթա քաղաքում, ռուսերեն լեզվով, երկու օրինակով ստորագրել են սույն Համաձայնագիրը:

Կողմերը, ստորագրվելու պահից մեկ ամսվա ընթացքում, Համաձայնագրի տեքստը կթարգմանեն հայերեն և էստոներեն լեզուներով և կուղարկեն մեկը մյուսին՝ ստորագրելու և պահելու համար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի ապրիլի 24-ից: